Պիրաբադին ու Խողբադին խոշուն էրեցին ու էկան Սա-

պատ է քաշած և որսի կենդանիներով լիքն է. բայց քաջութեան դէմ համարելով պարսպապատ սարի վերայ որս անելը, քանդում է պարիսպը և ընկնում մի վայրենի «խոզ»-ի (խոյի) յետևից։ Խոյը անցնում է Ծովասարի միւս կողմը, Մսրամելիքի «էլ»-ի (ժողովրդի) վրանների մէջ։ Դաւիթ թողնում է խոյը և յարձակու

վրանների վերայ. մէկի աչքն է հանում, միւսի ծամն է կտրում, մէկէլի ծիծը կտրում. և պատուիրում է Մսրամելիքին ասել. «Ուր կնկայ լաչին ուր գլխուն էղնի, թըխ գայ կռիւ էնինք»։

Դաւիթ վերադառնալիս մի «խանդրած» (աւերակ) վանք է տեսնում. «Հացն ու գինին, Տէր կենդանին» երդւում է տուն չ'գնալ, մինչև վանքը չ'շինէ։ Վանքը նորոգելուց յետոյ քառասուն երէց, քառասուն վարդապետ և քառասուն սարկաւագ միաբան է նշանակում, իսկ Օհան Աղբակեցուն վանքի պահապան, վերակացու։

Մսրամելիք իմանում է Դաւիթի արարմունքը և Ղողբադին ուղարկում է վրէժ առնելու։ Օհան Աղբակեցին՝ խաբուելով Ղողբադնի խոստումներով՝ անցնում է նորա կողմը։ Ղողբադինը վանքը կողոպտում և միաբաններին կոտորում է. միայն մի սարկաւագ ազատուելով՝ փախչում է Դաւիթին պատմելու եղելութիւնը։ Դաւիթը կեր ու խում ունէր, երբ սարկաւագը ներս է մտնում.

«Դաւիթ նստի հացն ու գինին,
Էկան խաբին Օհան Աղբակեցին,
Քառասուն էրէց սպանեցին,
Քառասուն վարդապետ, քառասուն սարգեւաք»։

Դաւիթ, լսելով սարկաւագի խօսքերը, իսկոյն վազում է թշնամիների յետևից, Օհան Աղբակեցուն երկու կտոր է անում, իսկ Ղողբադնին, ատամները ճակատին շարելով, ուղարկում է Մսրամելիքին։

Ընթերցողը իսկոյն կ'նկատէ, որ այս պարբերութիւնը նման է պ. Մ. Աբեղեանի «Դաւիթ և Մհեր»-ի վերջում գրուած «Թըռլան Դաւթի ճիւղից» վերնագրով հատուածին։ Պ. Աբեղեան այդ հատուածը մի առանձին ճիւղի մաս է համարում, բայց մեր հետամտութիւնը մեզ այն եզրակացութեան հասցրեց, որ այդ հատուածը առանձին ճիւղի մաս չէ, որովհետև Մոկաց բարբառով մեր հաւաքած բոլոր վարիանտներում այդ հատուածը Դաւթի ճիւղի մի պարբերութիւնն է կազմում, ինչպէս և Բ. վարիանտում, թէև բացի յայտնի Դաւթից մի ուրիշ Դաւթի անուն էլ են տալիս, որի մասին ոչինչ յայտնի չէ առայժմ։